ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2023թ. թիվ 243-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ՊՈՂՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից 2023թ. մայիսի 2-ից 5-ը «ՀՀ Լոռու մարզի Ձորամուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված ստուգումների արդյունքների մասին ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի 23.05.2023թ. թիվ 01/05.1/397-2023 գրությունը և հաշվի առնելով Ս.Պողոյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված՝ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների համար «ՀՀ Լոռու մարզի Ձորամուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ս.Պողոյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. ՀՀ Լոռու մարզի Ձորամուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ս.Պողոյանին՝

Սահմանված ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները և արդյունքների մասին տեղեկացնել:

3. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Գրիգորյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

12/06/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հունիսի 12
ք.Վանաձոր